ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի «Սպանդարյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

Տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,

2) բարձրագույն կրթությունը,

3) ուսումնական հաստատության կառավարման իրավունքը /հավաստագիր/:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1) Դիմում հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի պատճենը,

3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,

4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը /ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ/,

5) Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը /դրանց առկայության դեպքում/,

6) Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները համեմատվում են բնօրինակների հետ, իսկ բնօրինակները վերադարձվում են հավակնորդին:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է փաստաթղթերը ներկայացնել

<< Սպանդարյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ կառավարման խորհրդին:

Փաստաթղթերն ընդունվում են <<Սպանդարյանի միջնակարգ դպրոցում>>ՊՈԱԿ -ում 14.04.2018թ.-ից մինչև 13.05.2018թ.-ը, ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2018թ. մայիսի 22-ին, ժամը 14:00-ին՝ <<Սպանդարյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում:

Մանրամասների հետ ծանոթանալ ՀՀ Շիրակի մարզի <<Սպանդարյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ_ում՝ /հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ գ. Սպանդարյան, 15-րդ փողոց, շ.33:

հեռ. /093 339919/

ՀՀ Շիրակի մարզի «Սպանդարյանի միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդ

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Շիրակի մարզի «Սպանդարյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2018 թվականի մարտի 26-ի թիվ 7 նիստի արձանագրությունից

1. ՀՀ Շիրակի մարզի «Սպանդարյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի անցկացման մասին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը» հաստատելու մասին թիվ 319-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի>> 2-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ ՀՀ Շիրակի մարզի «Սպանդարյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.ՀՀ Շիրակի մարզի «Սպանդարյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար 2018թ. ապրիլի 14-ից մինչև 2018 թվականի մայիսի 13-ը հայտարարել մրցույթ:

2.Մրցույթ հայտարարելու մասին կառավարման խորհրդի որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին:

3.Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց /09.04.2018թ./ առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկատվությունը տրամադրել կրթության կառավարման պետական լիազորված մարմնին:

4.Մրցույթ հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակել ԶԼՄ-ներում /09.04.2018թ. առաջին, 14.04.2018թ. երկրորդ/ և azdarar.am կայքում:

5.Մրցույթն անցկացնել ՀՀ Շիրակի մարզի «Սպանդարյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում՝ 2018 թվականի մայիսի 22 -ին, ժամը 14^{00}-ին:

6.Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /գործերի/ ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի քարտուղար Թ. Մարտիրոսյանի վրա:

Մրցույթին մասնակիցների գործերն ընդունել ՀՀ Շիրակի մարզի,<<Սպանդարյանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում՝ մրցույթի մասին հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից 30 օրվա ընթացքում՝ 14.04.2018թ.-13.05.2018թ. ընկած ժամանակահատվածում՝ ժամը 10^{00}- 15^{00}:

ՀՀ Շիրակի մարզի «Սպանդարյանի միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ՝

Ա. Մխիթարյան